

ՎԻՆՏԵՐՎԵՐՊՆ ԸՆԴՀԵՄՆԻԴԵՈԼԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԸ

WINTERWERP v. NETHERLANDS

Դատարանի

1978թ. հոկտեմբերի 24-ի վճիռը

A. ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործի հանգամանքները

10. Պրն Օֆրանդ Վինտերվերպը Նիդեռլանդների քաղաքացի է, ծնված՝ 1956թ., ամուսնացած է, ունի մի քանի երեխա: 1968թ. տեղական բուրգումիստերի հրահանգով նրան անհապաղ տեղափորել են հոգերուժարանում: Վեց շաբաթ անց նրան կրկին տեղափորել են նոյն հիվանդանոցում՝ այս անգամ կնոջ խնդրանքով և նրա բնակության վայրի շրջանային դատարանի կարգադրությամբ: Հետազայում կնոջ, ապա նաև դատախազի պահանջով նրա՝ հիվանդանոցում գտնվելու ժամկետը յուրաքանչյուր տարի երկարաձգվում էր դատարանի կողմից՝ բուժող բժշկի եզրակացության հիման վրա:

Պրն Վինտերվերպն առարկում էր իր գործում կիրառված ընթացակարգի դեմ: Նա բողոքում էր, որ իրեն չեն ծանոթացրել համապատասխան կարգադրություններին, չի ստացել իրավաբանական օգնություն և հնարավորություն չի ունեցել վիճարկելու բժշկական եզրակացությունը:

Նա բողոքում էր նաև, որ գրկված է գործունակությունից:

a. *Նիդեռլանդական օրենսդրությունը հոգեկան հիվանդներին հարկադիր պահելու մասին*

11. Հոգեկան հիվանդներին հարկադիր պահելը կարգավորվում է Հոգեկան հիվանդների նկատմամբ պետական հսկողության մասին 1884թ. ապրիլի 17-ի օրենքով: Այն հաճախ հիշատակվում է որպես Հոգեկան հիվանդների մասին օրենք: Օրենքը մի քանի անգամ փոփոխությունների է ենթարկվել, վերջին անգամ՝ 1970թ. օգոստոսի 28-ին ընդունված օրենքով, որն ուժի մեջ է մտել 1972 թ. մայիսի 15-ին: Դա տեղի է ունեցել դիմողին ազատությունից առաջին անգամ զրկելուց որոշ ժամանակ անց: Ներկայումս սպասվում է համակարգը լիովին բարելավող օրինագծի ընդունումը Նիդեռլանդների պառլամենտի կողմից:

Հոգեկան հիվանդների մասին օրենքը բաղկացած է հինգ հիմնական գլուխներից: Տվյալ գործին վերաբերում են մասնա-

Վորապես երեք գլուխներ, որոնք, առաջին հերթին, կապված են անձանց՝ հոգեբուժարան տեղավորելու և նրանց այնտեղ գտնվելու, արձակուրդ ուղարկելու և այնտեղից ազատելու հետ, ինչպես նաև հոգեբուժարան տեղափոխված անձանց գույքի կառավարման հետ:

Օրենքը չի սահմանում, թե ով է համարվում «հոգեկան հիվանդ», սակայն նախատեսում է նման անձանց հոգեբուժարանում տեղավորելու հիմքերը (տես հաջորդ կետերը): Ներկայացված ապացույցը վկայում է, որ ներկայումս գոյություն ունեցող ընդհանուր դատական պրակտիկայի համաձայն Նիդեռլանդների դատարանները քոյլ կտան «հոգեկան հիվանդին» անազատության մեջ պահել, միայն, եթե նրա հոգեկան խանգարումն այնպիսին է կամ այնքան լուրջ, որ իրական վտանգ է ներկայացնում ինչպես իր, այնպես էլ այլոց համար:

(i) Ազատությունից գրկելու ընթացակարգը ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում

12. Անհետածգելի դեպքերում քուրզոմիստերն իրավունք ունի կարգադրելու «հոգեկան հիվանդին» հարկադրաբար տեղավորել հոգեբուժարանում:

Մինչ 1972թ. քուրզոմիստերը պետք է բժշկական խորհուրդ ստանար, եթե միայն դա քոյլ էին տալիս հանգամանքները. նրա որոշումն ուժի մեջ էր երեք շաբաթվա ընթացքում, սակայն դատախազը կարող էր կրծատել կամ երկարացնել այդ ժամկետը (օրենքի 14-րդ մաս):

Ընթացակարգն էականորեն փոխվել է 1970 թ. օրենքով, 14-րդ մասը վերացվել է և փոխարինվել 35b-35j մասերով: Քուրզոմիստերն այժմ պարտավոր է ստանալ հոգեբույժի նախնական կարծիքը կամ, եթե դա հնարավոր չէ, մեկ այլ բժիշկ-քերապետի կարծիքը: Հենց որ վերջինս անձին ձերբակալելու ցուցում է տալիս, նա այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնի դատախազին և նրան ուղարկի բժշկական փաստաթղթերը, որոնց վրա հիմնված է կարգադրությունը: Դատախազը, իր հերթին, պետք է փոխանցի այս փաստաթղթերը Մարզային դատարանի նախագահին ոչ ուշ, քան հաջորդ օրը, անհրաժեշտության դեպքում անազատության մեջ պահելու ժամկետը երկարացնելու մասին դիմումի հետ մեկտեղ: Երկարացնը, եթե այն տեղի է ունենում, ուժի մեջ է երեք շաբաթվա ընթացքում, սակայն կարող է նորոգվել Նախագահի կողմից երկրորդ անգամ նույն տևողությամբ: Այնուհետև հաջորդում է ժամանակավոր ազատազրկման մասին որոշման համար դիմումների ընթացակարգը:

(ii) Ժամանակավոր ազատազրկման մասին որոշման հարցը

13. Վերոնշյալ ծայրահեղ դեպքերից բացի, ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել հոգեկան հիվանդության կամ խելազարության հիման վրա, բացառությամբ դատարանի կողմից ընդունված՝ ժամանակավոր ազատազրկման մասին որոշման հիման վրա:

Ծրջանային դատարանի դատավորը կարող է ընդունել ժամանակավոր ազատազրկման մասին որոշում՝ անձի հետ արյունակցական կամ ամուսնական կապերով կապված և նրա ազատազրկումը պահանջող չափահաս ազգականի, ամուսնու կամ օրինական ներկայացուցչի կողմից տրված գրավոր դիմումի հիման վրա՝ հասարակական կարգի կամ նրա սեփական շահերից ելնելով (Օրենքի 12-րդ մաս): Դատավորն այդպիսի որոշում կարող է ընդունել նաև չափահաս անձի դիմումի հիման վրա, որը գտնում է, որ իր վիճակն այնպիսին է, որ պահանջում է համապատասխան բուժում (15-րդ մաս): Ի վերջո, ժամանակավոր ազատազրկման մասին որոշումը կարող է ընդունվել Մարզային դատարանի նախագահի կողմից՝ դատախազի միջնորդության հիման վրա:

Դիմումը կամ միջնորդությունը պետք է, Օրենքի 16-րդ մասի համաձայն, ուղեկցվի Նիդեղանդներում աշխատելու արտոնագիր ունեցող բժշկի կողմից ոչ ուշ, քան յոթ օր առաջ կազմված հայտարարությամբ: Ի դեպ, տվյալ բժիշկը չպետք է կապված լինի այն հաստատության հետ, որտեղ հիվանդը պետք է տեղափոխվի: Հայտարարության էությունը կայանում է նրանում, որ տվյալ անձը «հոգեկան խանգարման վիճակում է, և որ անհրաժեշտ կամ ցանկալի է նրան բուժել հոգեբուժարանում»: Դիմումը կարող է նշել նաև փաստեր և փաստաթղթեր, որոնք առավել որոշակիացնում են հոգեկան խանգարման վիճակը, սակայն դա միանգամայն երկրորդական է:

Մինչև 1970 թ. օրենքի ուժի մեջ մտնելը բժշկական հայտարարությունը պետք է կազմվեր հոգեբույժի կողմից, որն անձամբ չեր բուժում հիվանդին: Հնարավորինս այն պետք է պատճառաբանված հայտնի, թե արդյոք հիվանդի վիճակն այնպիսին է, որ անհմաստ և բժշկական տեսանկյունից աննպատակահարմար կլինի հիվանդի համար դատարանում հանդես գալը: Հոգեբույժը, եթե կարող է, պետք է առաջին հերթին խորհրդակցի ընտանեկան բժշկի հետ:

14. Դատավորն ընդունում է ժամանակավոր ազատազրկման մասին որոշում, եթե բժշկական հայտարարությունը՝ առան-

ձին, կամ գործի հետ կապ ունեցող փաստերի կամ տրված փաստաբղերի հետ մեկտեղ հաստատում է, որ հոգեբուժաբանում բուժում ստանալն անհրաժեշտ է կամ ցանկալի (Օրենքի 17-րդ մաս, կետ 1-ին):

Մինչև 1972 թ. դիմումի կամ միջնորդության քննությունը ենթակա չէր որևէ սահմանափակող ձևականությունների: 17-րդ մասը նախատեսում էր, որ դատավորն իրավասու էր նախապես լսելու այն անձին, որի ազատազրկման հարցն էր որոշվում: Վերոհիշյալ փոփոխված օրենքի արդյունքում՝ այժմ դատավորը պարտավոր է լսել անձին, եթե բժշկական հայտարարության հիման վրա չի հանգում այն եզրակացության, որ այդ ամենն անհմաստ կամ բժշկական տեսանկյունից արդարացված չէ: Նա կարող է իր նախաձեռնությամբ կամ այդ անձի խնդրանքով վերջինիս ապահովել իրավաբանական օգնությամբ (17-րդ մաս, կետ 3-րդ): Դատավորը պետք է փորձի ստանալ հնարավոր լիարժեք տեղեկատվություն ինչպես 12-րդ և 13-րդ մասերում նշված դիմումը կամ միջնորդությունը ներկայացրած անձից, այնպես էլ որոշ այլ անձանցից (17-րդ մաս, կետ 4-րդ): Նա իրավունք ունի կանչելու վկաների և փորձագետների (17-րդ մաս, կետ 5) և, անհրաժեշտության դեպքում, կարող է դատարանում հանդես գալու համար կանչել ցանկացած անձի, ով 12-րդ մասին համապատասխան դիմում է ներկայացրել ազատությունից զրկելու հարցը լուծելու համար (17-րդ մաս, կետ 6-րդ):

15. Ժամանակավոր ազատազրկման մասին որոշումը ենթակա չէ բողոքարկման և, ավելին, չի ծանուցվում շահագրգիռ անձին (17-րդ մաս), այն ուժի մեջ է վեցամսյա ժամկետում (22-րդ մաս):

Կարգադրությունը՝ ազատազրկման մասին կարգադրությունների նման (տես ստորև՝ կետեր 16 և 17-րդ) ավելի շուտ քույլ է տալիս, քան պարտադրում հարկադիր ազատազրկումը, և այն կարող է չիրականացվել: Այն դեպքում, եթե անձը դեռ չի գտնվում հիվանդանոցում, հոգեբուժաբանում կամ այլ մասնագիտացված հաստատությունում տեղավորելը պետք է իրականացվի 14 օրվա ընթացքում՝ դատարանի կարգադրության հիման վրա (17-րդ և 18-րդ մասեր): Արյունակցական կամ ամուսնական կապերով կապված մերձավոր ազգականները կամ ամուսինը կամ օրինական ներկայացուցիչը բուրգումխստերի կողմից պետք է տեղեկացվեն հիվանդին հիվանդանոցում տեղավորելու մասին, որն այդ մասին տեղեկացվում է դատարանի կամ դատախազի կողմից (19-րդ մաս): Բժշկական եզրակացությու-

Այլ, որի հիման վրա դատավորն ընդունել է իր որոշումը, պետք է փոխանցվի տվյալ հաստատության բժշկին, որը բուժում է հիվանդին: Այդ բժիշկն իր եզրակացությունները պետք է մատյանում գրանցի ամեն օր՝ առաջին երկու շաբաթվա ընթացքում, ապա յուրաքանչյուր շաբաթ՝ հետագա վեց ամսվա ընթացքում, այնուհետև՝ ամսական մեկ անգամ (20-րդ մաս):

Հիվանդանոցում պահելու երկու շաբաթվա ընթացքում հիվանդի բուժման համար պատախանատու բժիշկը հիվանդանոցի գոտնվելու վայրի դատախազին պետք է ուղարկի պատճառաբանված եզրակացություն հիվանդի հոգեկան վիճակի մասին և հոգեբուժարանում նրա բուժումը շարունակելու անհրաժեշտության կամ ցանկալիության մասին (21-րդ մաս):

(iii) Ազատությունից գրկելու մասին որոշումը

16. Ժամանակավոր ազատազրկման կարգադրությանը հաջորդող վեց ամսվա ընթացքում Մարզային դատարան կարող է ներկայացվել հոգեբուժարանում հիվանդի բուժումը մինչև մեկ տարի շարունակելու վերաբերյալ հետագա դիմում: Այսպիսի ցանկացած դիմում կամ միջնորդություն պետք է ուղեկցվի պատախանատու բժշկի բժշկական գրառումներով՝ հոգեբուժարանում հիվանդի բուժումը շարունակելն անհրաժեշտ կամ ցանկալի լինելու մասին նրա պատճառաբանված եզրակացության հետ մեկտեղ (22-րդ մաս):

Կարիք չկա, որպեսզի հիվանդը տեղեկացվի դիմումի կամ միջնորդության կամ դրանց քննության մասին:

17. Դիմումի կամ միջնորդության կապակցությամբ որոշումն ընդունվում է Մարզային դատարանի կողմից (23-րդ մաս): Բացի դատախազին լսելու պարտականությունից, դատարանը պարտավոր չէ հետևելու որևէ կոնկրետ ընթացակարգի: Նա կարող է ապացույցներ պահանջել վկաներից կամ այլ աղբյուրներից, լսել հիվանդին, ապահովել նրան իրավաբանական օգնությամբ և հարցաքննել փորձագետներին, սակայն դատարանը կարող է նաև չանել այս ամենը: Գործի քննության ընթացքում հիվանդը պետք է մնա տվյալ հաստատությունում, անհրաժեշտության դեպքում վեց ամսից ավելի ազատազրկման մասին որոշումն ընդունելուց հետո:

Մարզային դատարանի որոշումը, որը ենթակա չէ բողոքարկման, չի ընդունվում հրապարակային լուսումներում և չի ծանուցվում շահագրգիռ անձին: Գործնականում հիվանդանոցի հայեցողությանն է բողնոված այն հարցի լուծումը, թե արդյոք այդպիսի ծանուցումն արդարացված է բժշկական տեսանկյունից և երբ:

Զաղաքացիական գործերի քննության ընթացքում սովորաբար Մարզային դատարանը հանդես է գալիս առնվազն երեք դատավորից բաղկացած կազմով (Դատարանակազմության մասին օրենքի 43-րդ մաս, կետ 1-ին): Այնուամենայնիվ, այս պալատը, նպատակահարմար գունդելու դեպքում, կարող է նման գործերը փոխանցել միանձնյա դատավորին (Զաղաքացիական դատավարության օրենսգրքի 288(b) հոդվ.): Յուրաքանչյուր Մարզային դատարան ունի իր կանոնակարգը, որը հաստափած է Արքայական իրամանակարգով՝ Գերագույն դատարանի խորհրդով: Ուստեսական Մարզային դատարանի կանոնակարգով, որն ուժի մեջ էր գործին վերաբերող ժամանակահատվածում (տես ստորև՝ կետեր 25 և 26-րդ), ազատազրկմանը և հոգեբուժարանում անձանց տեղավորմանը վերաբերող բոլոր գործերը ենթակա են քննության միանձնյա կարգով:

(iv) Ազատությունից զրկելու մասին որոշման նորոգումը

18. Մինչև դատարանի՝ ազատությունից զրկելու մասին որոշմամբ նախատեսված ժամկետի լրանալը ոչ ավելի, քան 14 և ոչ պակաս, քան 8 օր առաջ Մարզային դատարանին կարող է ներկայացվել դիմում կամ միջնորդություն՝ հիվանդին հիվանդանոցում պահելու ժամկետը մինչև մեկ տարի երկարացնելու մասին (Հոգեկան հիվանդների մասին օրենքի 24-րդ մաս):

Հետագա ընթացակարգը նույնն է, ինչ ազատությունից զրկելու մասին կարգի կայացման ընթացակարգը, որը նախատեսված է Օրենքի 23-րդ մասով: Օրենքը չի նախատեսում, թե դատարանը երբ պետք է ընդունի իր կարգը:

(v) Ազատությունից զրկելու մասին որոշման կասեցումը կամ դադարեցումը

19. Հիվանդին որոշակի ժամկետով արձակուրդ կարող է տրվել պատասխանատու բժշկի կողմից (27-րդ մաս):

20. Հոգեբուժարանի դեկավարությունը կարող է ցանկացած ժամանակ հիվանդին դուրս գրել վերոնշյալ բժշկի գրավոր եզրակացության հիման վրա, ըստ որի՝ հիվանդը չի դրսեորում հոգեկան հիվանդության ոչ մի նշան կամ նրա հետագա բուժումը հոգեբուժարանում անհրաժեշտ և ցանկալի չէ (28-րդ մաս):

Հիվանդանոցից դուրս գրելու գրավոր խնդրանք կարող է հիվանդանոցի դեկավարությանը ներկայացվել հենց հիվանդի կողմից կամ այն անձի կողմից, ով պահանջել է նրան ազատությունից զրկել, կամ վերջինիս բացակայության դեպքում՝ արյունակցական կամ ամուսնական կապերով կապված այլ ազգականե-

թի կողմից, որոնք նշված են 12-րդ մասում (1970 թ. օրենքին նախորդած տարբերակի 29-րդ մաս, կետ 1-ին): Դեկավարությունը պետք է անհապաղ խորհրդակցի պատասխանատու բժշկի հետ, և եթե նրա կարծիքը դրական է, հիվանդին պետք է դուրս գրի հիվանդանոցից: Եթե բժշկի կարծիքը դրական չէ, դեկավարությունը պետք է խնդրանքը՝ կարծիքի հետ մեկտեղ, փոխանցի դատախազին, որն, այն փոխանցում է Մարզային դատարանին՝ որոշում ընդունելու համար: Դատավարական կարգն այս դեպքում նույնն է, ինչ ազատությունից զրկելու մասին որոշում կայացնելիս (տես վերը՝ կետ 17): Վերջինիս որոշումը ենթակա չէ բողոքարկման (29-րդ մաս, կետեր 2-րդ և 4-րդ):

Այնուամենայնիվ, դատախազը պարտավորված չէ խնդրանքը փոխանցել դատարան, եթե ակնհայտորեն անհնարին է քավարարել խնդրանքը, եթե դեռ քննարկվում է նախորդ խնդրանքը կամ եթե դատարանն արդեն մերժել է նույնատիպ խնդրանքը՝ ազատությունից զրկելու մասին որոշմամբ նախատեսված ժամկետի ընթացքում, և հանգամանքները չեն փոխվել (29-րդ մաս, կետ 3-րդ):

Դատախազը, պատասխանատու լինելով հոգեբուժարանների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար, պարտավոր է հետևել, որ ոչ ոք ապօրինի չտեղափորվի տվյալ հաստատությունում: Պատասխանատու բժշկի համաձայնության դեպքում դատախազը կարող է որոշում ընդունել այն հիվանդին հիվանդանոցից դուրս գրելու մասին, ում հիվանդանոցում հարկադիր պահելը նա անհրաժեշտ չի համարում: Եթե պատասխանատու բժիշկը համաձայն չէ, դատախազը կարող է հարցը փոխանցել Մարզային դատարան: Եթե դատախազը կասկածներ ունի հիվանդին հիվանդանոցում պահելու անհրաժեշտության վերաբերյալ, նա կարող է հարցը փոխանցել դատարան. նա պարտավոր է այդ կերպ վարվել, եթե այդպես է պահանջում հասարակության առողջության տեսուչը (30-րդ մաս):

Եթե լրանում է ազատությունից զրկելու մասին որոշմամբ նախատեսված ժամկետը, հիվանդանոցի դեկավարությունն ութ օրվա ընթացքում այդ մասին պետք է տեղեկացնի դատախազին, և եթե դատարան չի ներկայացվում անազատության մեջ պահելու ժամկետը երկարացնելու մասին որևէ դիմում, նա պետք է այնուհետև որոշում ընդունի հիվանդին ազատելու մասին, եթե բժշկի կողմից տրված պատճառաբանված եզրակացությունից չի հանգում այն եզրակացության, որ նման քայլը վտանգ կառացնի հասարակական կարգի համար: Վերջին դեպքում դեկա-

վարությունն ինքը պետք է խնդրի դատարանին երկարացնել անազատության մեջ պահելու ժամկետը (31-րդ մաս):

(vi) Ազատությունից գրկելը և քաղաքացիական գործունակությունը

21. Յուրաքանչյուր չափահաս անձ, ով փաստացի գտնվում է հոգեբուժարանում, գրկվում է իր գույքը կառավարելու ունակությունից (32-րդ մաս): Դրա հետևանքով հիվանդանոցում տեղավորելուց հետո տվյալ անձի կողմից կնքված բոլոր գործարքներն առոչինչ են և նա չի կարող օրենքով փոխանցել իր գույքը կամ տնօրինել իր բանկային հաշիվը: Հիվանդը կրկին ձեռք է բերում իր գույքը տնօրինելու ունակությունը միայն երբ նրան պաշտոնապես դուրս են գրել հիվանդանոցից, սակայն ոչ արձակուրդ տրամադրելու դեպքում:

Տվյալ անձի ազատազրկումը պահանջող ցանկացած անձի դիմումով կամ դատախազի միջնորդությամբ Մարզային դատարանը կարող է ժամանակավոր կառավարիչ նշանակել հիվանդանոցում գտնվող ցանկացած անձի համար, եթե դա անհրաժեշտ է կամ ցանկալի (33-րդ մաս): Ի լրումն վերոնշյալի՝ Քաղաքացիական օրենսգրքի 378-րդ հոդվածում նշանաւեսված նորմը Մարզային դատարանին հնարավորություն է տալիս անձի համար նշանակել խնամակալ՝ անկախ նրա կալանքի տակ գտնվելու կամ չգտնվելու հանգամանքից, եթե վերջինս հոգեկան հիվանդության կամ դիպումանիայի պատճառով այլևս չի կարող կառավարել իր գործերը:

(vii) Պառամենտում գտնվող օրինագիծը

22. Օրինագծի նպատակը, ըստ էության, հոգեկան հիվանդների դրության բարելավումն է. այն նպատակ ունի ուժեղացնելու նրա ազատազրկմանն ուղեկցող ընթացակարգային երաշխիքները և հիվանդանոցում գտնվելու ընթացքում տրամադրել առավել ազատություն:

Հոգեբուժարանում պահելն արդարացնող չափանիշն այդուհետև այնպիսին կլինի, որ անձն իր հոգեկան վիճակով «վտանգ ներկայացնի իր, այլոց կամ անձանց և գույքի ընդհանուր անվտանգությանը»: Հետագա փոփոխությունները ներառելու են հետևյալը. իրավասու դատարանը բոլոր փուլերում հանդես կգա Մարզային դատարանի միանձնյա դատավորի կազմով, ժամանակավոր ազատազրկման մասին որոշումն ուժի մեջ կլինի միայն երեք շաբաթ, մինչև որոշում ընդունելը կամ ազատ արձակելու խնդրանքը բավարարելը դատարանը, որպես ընդիանուր

կանոն, պետք է լսի տվյալ անձին. միակ դեպքը, երբ դատարանը կարող է որոշել չլսել հիվանդին, կլինի այն, երբ առաջին ազատագրկման մասին որոշման մասին դիմումը կամ միջնորդությունը քննարկելիս ժամանակավոր ազատագրկման որոշումն ընդունելու պահից անցել է երեք շաբաթ. դատավորը պարտավոր կլինի տվյալ անձին տրամադրել իրավաբանական օգնություն՝ նրա խնդրանքով. կասինանվի անազատության մեջ պահելու բույլտվություն նախատեսող որոշումների բողոքարկման իրավունք, հոգեբուժարանում տեղավորելն ինքնին քաղաքացիական գործունակության կորուստ չի առաջացնի:

B. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

23. Պրն Վինտերվերպը կամավոր բուժում է ստացել հոգեբուժարանում 1967թ. մարտի 28-ից սեպտեմբերի 12-ը: Մինչ այդ, նա, ըստ երևոյթին, պատահարի ժամանակ ուղեղի ծանր վնասվածք էր ստացել: 1968թ. մայիսի 17-ին նրան տեղավորել են Ամերսֆուրտի «Zon en Schild» («Արև և վահան») հոգեբուժարանում Ամերսֆուրտի բուրգումիստերի որոշմամբ՝ առաջին բուժօգնության ցուցաբերման ընթացակարգին համապատասխան՝ Հոգեկան հիվանդների մասին օրենքի 14-րդ մասի հիման վրա (տես վերը՝ կետ 12): Այս որոշման համար հիմք է ծառայել այն փաստը, որ դիմողը տեղական գրանցման գրասենյակից փաստաթղթեր է գողացել, ճերբակալվել է ոստիկանության կողմից, այնուհետև նրան հայտնաբերել են մերկ վիճակում բանտախցի մահճակալին պառկած: Ազատությունից զրկելու ժամկետը երկարացվել է դատախազի կողմից՝ 14-րդ մասի 3-րդ կետին համապատասխան:

24. 1968թ. հունիսի 24-ին, «ծայրահեղ անհրաժեշտ» ազատագրկման ընթացքում պրն Վինտերվերպի կինը դիմել է Ամերսֆուրտի Շրջանային դատարան «Zon en Schild» հիվանդանոցում նրան ժամանակավոր պահելու համար՝ ելնելով հասարակական կարգի, ինչպես նաև իր ամուսնու շահերից:

Դիմումին կից ներկայացվել է հունիսի 20-ին հիվանդին առաջին անգամ հետազոտած գլխավոր թերապևտի կողմից այդ օրը կազմված բժշկական եզրակացություն: Դրանում նշված էր, որ հիվանդն ազատությունից զրկվել է 1966 թ. «սպանության փորձի համար» և հոգեբուժարանում բուժում է ստացել 1967 թ.: Նշված էր նաև, որ հիվանդը «մտազար էր, որը տառապում էր երևակայական և ուսուպիստական զաղափարներով, և որը բավականին տևական ժամանակ հեծեծել է ինչպես ինքն իրեն,

այնպես էլ իր ընտաճիքին», և որ նա «փր վիճակին անտեղյակ է»: Բժիշկը եզրակացրել է, որ «տվյալ պահին» հիվանդին ուղղակի չի կարելի «ազատ քողմել հասարակության մեջ»:

Հունիսի 24-ին այս հայտարարության հիման վրա Շրջանային դատարանը բավարարել է դիմումը և քոյլատրել է հիվանդի ժամանակավոր ազատազրկումը՝ առանց նախօրոք նրան կամ մասնագետի կարծիքը լսելու:

25.1968 թ. նոյեմբերի 1-ին դիմողի կինը դիմել է Ուտրեխտի Մարզային դատարան իր ամուսնու նկատմամբ մեկ տարվա ազատազրկման որոշում ընդունելու խնդրանքով:

Նրա դիմումին կից ներկայացված էին պատասխանատու քժկի ամենօրյա և շաբաթական գրառումները, ինչպես նաև հոգեբուժարանում բուժում ստանալն անհրաժեշտ կամ ցանկալի համարելու կապակցությամբ կազմված եզրակացությունը:

Այս փաստարդերի հիման վրա այսպիսի գործերը լսելու պարտականություն կրող միանձնյա դատավորը 1968 թ. դեկտեմբերի 23-ին կայացրել է իր որոշումը:

26. 1969թ. դեկտեմբերի 16-ին տիկին Վինտերվերավի դիմումն ստանալուց հետո և պատասխանատու քժկի ամսական գրառումների և նրա եզրակացության հիման վրա, որը համընկնում էր նախորդ տարվա եզրակացության հետ, միանձնյա դատավորը որոշում է ընդունել ազատազրկման երկարացումը քոյլատրելու մասին. «Եթե անհրաժեշտ է մեկ տարով»՝ 1969 թ. դեկտեմբերի 23-ից սկսած:

1970թ. օգոստոսի 6-ին դիմողն ուղարկվել է Պետական հոգեբուժական հաստատություն, որը գտնվում է Էինդհովենում: Այս հիվանդանոցը հիվանդի կնոջ տնից բավականին հեռավորության վրա էր գտնվում, որին նա ավելի վաղ մի քանի անգամ հնարավորություն էր ունեցել այցելել:

27. 1970թ. դեկտեմբերի 14-ին՝ s-Hertogenbosch-ի դատախազը միջնորդել է ժամանակավոր ազատազրկումը և մեկ տարով երկարացնելու համար՝ պրո Վինտերվերավին պարբերաբար բուժած քժկների ամսական գրառումների և Էինդհովենում պատասխանատու քժկի եզրակացության հիման վրա, որի էությունը կայանում էր հետևյալում.

«Հիվանդը տառապում է հոգեկան հիվանդության հետևյալ ախտանիշներով. հոգեհիվանդ, կովարար բնավորություն, խելացնորության հակում, անվստահություն, ցուցաբերում է մտավոր հետամնացություն՝ դյուրահույզ հետամնացության տեսքով, եսակենտրոնամետություն, խիստ հսկողության և հատուկ

խնամքի կարիք է զգում: Հոգեբուժարանում քուժումը շարունակելը պետք է համարել անհրաժեշտ»:

1971թ. հունվարի 7-ին, այն է՝ նախորդ որոշումից երկու շաբաթ անց, «s-Hertogenbosch-ի Մարզային դատարանի առաջին ընդհանուր իրավասության պալատը քույլ է տվել ազատազրկումը շարունակել ևս մեկ տարի ժամկետով»:

28. 1971թ. դեկտեմբերի 21-ին, 1972 թ. դեկտեմբերի 15-ին և 1973 թ. դեկտեմբերի 14-ին նույն դատարանը որոշումներ է ընդունել ազատազրկումը ևս մեկական տարի ժամկետով երկարացնելու մասին՝ դատախազի միջնորդության, պատախանատուությունների հիման վրա, որը, այնուամենայնիվ, փոփոխվել էր 1972թ. ընթացքում: 1974թ. դեկտեմբերի 19-ին և 1975թ. դեկտեմբերի 15-ին Տարածքային դատարանը կրկին բավարարել էր մեղադրողի նույնանման միջնորդությունը: Վերջին որոշումը, որին ապացույցի մեջ հղում է կատարված, ընդունվել է 1977 թ. դեկտեմբերին:

29. Ամեն տարի դատարանին ուղղված քժկական փաստաթղթերում բավականին համառոտ նշված էին, որ դիմողը ցուցաբերել է մտագարություն և խելացնորդության հակազդեցություններ, որ նա իր աննորմալ վիճակին անտեղյակ է եղել, և որ մի քանի դեպքերում նա կատարել է բավականին լուրջ գործողություններ՝ առանց զնահատելու դրանց հետևանքները: Օրինակ, դրանցում նշվում էր, թե ինչպես, ինչ-որ խելահեղ մտադրություններ իրականացնելով, այն Վիճակը կերպով ընտանեկան խնայողությունների հաշվին մեկնել է արտասահման և շուտով մնացել է առանց մանրադրամի, առանց գիտակցելու այն վիճակը, որում նա բողել էր իր ընտանիքին, ինչպես նաև իր կախվածությունը հյուպատոսական մարմիններից, որոնք պետք է իրեն օգնեին և հայրենիք վերադարձնեին:

30. 1969 թ. փետրվարին դիմողն առաջին անգամ հիվանդացի դեկավարությանն իրեն դուրս գրելու մասին պահանջ է ներկայացրել՝ Օրենքի 29-րդ մասին համապատասխան (տես վերը՝ կետ 20): Տվյալ պահանջը հիվանդացի դեկավարությունը փոխանցել է դատախազին, որը, իր հերթին, այն փոխանցել է Մարզային դատարան: Վերջինս, հիվանդին հիվանդացում լսելոց հետո, մերժել է պահանջը:

1971 թ. ապրիլին հիվանդացի դեկավարությունը երկրորդ միջնորդությունն է ներկայացրել դատախազին՝ բացասական կարծիքով: Պրո Վիճակը վերպին լսելոց հետո՝ դատախազը, 29-

թղ մասի 3-րդ կետին համապատասխան, մերժել է պահանջը՝ առանց այն Մարզային դատարան փոխանցելու: Նույնը տեղի է ունեցել նաև երրորդ խնդրանքի հետ, որը ներկայացվել է 1972թ. հուլիսին: 1973 թ. փետրվարի 20-ին դիմողը ևս մեկ պահանջ է ներկայացրել «Rijks Psychiatrisch Inrichting»-ի դեկավարությանը:

1973թ. ապրիլի 26-ին հիվանդանոցի բուժ. տնօրենը պահանջը, իր դիմողությունների հետ մեկտեղ, փոխանցել է դատախազին, դիմողություններում մասնավորապես նշված է. հիվանդը տառապել է պարանոիկ պսիխոգիանվ, որը կարող էր արդյունավետ բուժվել պսիխոպարմակոլոգիական մեթոդներով, սակայն նախորդ արձակուրդների ընթացքում նա նշանակված դեղերը չի ընդունել, որի հետևանքով բժշկական ռեցիդիվից հետո նրան ստիպված են եղել կրկին բուժում նշանակել. քայլեր են արվել հիվանդին հասարակության մեջ ինտեգրելու համար, և նա զիշերներն անց է կացրել հիվանդանոցից դուրս. վերջին շրջանի վատացումներից ելնելով՝ անխմատ կլիներ նրան ազատ արձակելը: Այս կարծիքի հիման վրա և պրն Վինտերվերպին լսելուց հետո դատախազը կրկին մերժել է պահանջը և ձեռնպահ մնացել այն Մարզային դատարան փոխանցելուց: Այս որոշման մասին վերջինս դիմողին ծանուցել է 1973թ. մայիսի 17-ին:

Դիմողի չորս պահանջները եղել են սովորական հայտարարության ձևով՝ առ այն, որ ինքը հոգեկան խանգարում չի ունեցել, որ զանցանքների մեջ նրան մեղադրելը կեղծ է եղել, և որ ինքը վտանգ չի ներկայացրել իր և այլոց համար: Դատախազը վերջին երեք պահանջները չեր ուղարկել Մարզային դատարան, քանի որ դրանց բավարարումն ակնհայտորեն անհնարին էր համարել:

31. Պրն Վինտերվերպը ժամանակ առ ժամանակ արձակուրդ է ստացել տարբեր ժամանակահատվածներով: Առնվազն չորս առիթով՝ 9 ամիս 1974 թ., 4 ամիս՝ 1976-1977 թթ., մեկ ամիս և երկուսունկես ամիս՝ 1978թ.: Այդ ժամանակահատվածներում նրան փորձնական բույլ են տվել հիվանդանոցից դուրս գտնվել: Ամեն անգամ ստիպված են եղել նրան վերադարձնել հիվանդանոց: Դա տեղի է ունեցել մի քանի պատճառներով. նա դադարել էր ընդունել նշանակված դեղերը, նրան հայտնաբերել են ոչ մարուր պայմաններում ապրելիս, վերջին ժամանակները Գերմանիայում իր բնակության վայրում պատուհան էր կոտրել:

32. Պրն Վինտերվերպն ինքնարերաբար կորցրել է իր գույքը կառավարելու ունակությունը՝ հոգեբուժանում գտնվելու հետևանքով (օրենքի 32-րդ մաս, տես վերը՝ կետ 21): Որևէ ժա-

մանակավոր կառավարիչ չի նշանակվել, և նրա միջոցները փաստորեն կառավարել է նրա կինը: Այնուհետև, 1971թ. օգոստոսի 11-ին Մարզային դատարանի կողմից խնամակալ է նշանակվել (Քաղաքացիական օրենսգրքի 378-րդ հոդված): Խնամակալը պրո Վինտերվերպին ազատ արձակելու վերաբերյալ որևէ պահանջ չի ներկայացրել:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

33. 1972թ. դեկտեմբերի 13-ին Հանձնաժողովին հղած իր գանգատում պրո Վինտերվերպը բողոքել է, որ իրեն կամայականորեն զրկել են ազատությունից, որ իրեն չեն թույլ տվել հանդես գալու դատարանում, և որ իրեն չեն հայտնել այն որոշումների մասին, որոնց հիման վրա իր ազատազրկումը երկարացվել է մի քանի անգամ:

1975թ. սեպտեմբերի 30-ին Հանձնաժողովն ընդունել է գանգատը՝ նշելով, որ «զանգատը քննության է առել... Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա (հոդվ. 5)»:

Ըստ Էության, քննության ընթացքում դիմողի փաստաբանն առաջ է քաշել հետևյալ բողոքը. իր պաշտպանյալի՝ գույքը կառավարելու ունակության ինքնարերար կորուստն առնչվում է «նրա քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշմանը», որը տեղի է ունեցել պատշաճ դատական քննության բացակայության պայմաններում, որի հետևանքով խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը (հոդվ. 6-1):

34. 1977թ. դեկտեմբերի 15-ի իր գեկույցում Հանձնաժողովը միանշանակ կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, բայց ոչ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Մյուս կողմից, Հանձնաժողովը գտել է, որ ինքը չպետք է կարծիք հայտնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ, քանի որ «այս հարցը կապված է այնպիսի փաստերի հետ, որոնք տարբերվում են ի սկզբանե ներկայացվածներից... և ներկայացված որևէ մանրամասն փաստարկի առարկա չի հանդիսացել»:

Գործը Հանձնաժողովի կողմից փոխանցվել է Դատարան 1978 թ. մարտի 9-ին, Նիդեռլանդների կառավարության կողմից՝ 1978 թ. ապրիլի 21-ին:

ԻՐԱՎՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐ

1. 5-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտում

35. Կասկած չկա, որ, 1968թ.-ից ի վեր, բացառությամբ մի քանի ընդմիջումների, դիմողը զրկված է եղել ազատությունից՝ Հոգե-

կան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի հիման վրա: Նա պնդում է, որ հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման զոհ, որը սահմանում է:

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող զրկել ազատությունից այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով նախատեսված կարգով՝

... Հոգեկան հիվանդների օրինական ազատազրկում»:

Ա. «Հոգեկան հիվանդների օրինական ազատազրկում»

36. Պրճ Վինտերվերպը նախ պնդում էր, որ իր ազատազրկումը չի բավարարում «հոգեկան հիվանդների օրինական ազատազրկում» արտահայտության մեջ բովանդակվող պահանջները: Ոչ Կառավարությունը, ոչ Հանձնաժողովը համաձայն չին այս պնդմանը:

37. Կոնվենցիայում ասված չէ, թե ինչ պետք է հասկանալ «հոգեկան հիվանդ» բառի ներքո: Հնարավոր չետալու այդ տերմինի վերջնական մեկնաբանությունը: Ինչպես նշվել է Հանձնաժողովի, Կառավարության և դիմողի կողմից, վերջինիս իմաստն անընդհատ փոփոխվում է հոգերուժության բնազավառում կատարվող հետազոտություններին զուգընթաց: առավել ճկուն են դառնում բուժման մերողները և փոխվում է հասարակության վերաբերմունքը հոգեկան հիվանդությունների նկատմամբ, միաժամանակ հասարակության մեջ մեծանում է հոգեկան հիվանդների պրոբլեմների ընկալումը:

Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետի (e) ենթակետը չի կարող դիտվել որպես անձին կալանքի տակ պահելու քոյլ-տվություն միայն այն բանի համար, որ նրա հայացքները կամ պահվածքը չեն համապատասխանում տվյալ հասարակությունում գերիշխող նորմերին: Այլ մոտեցումը կնշանակի հակասության մեջ մտնել 5-րդ հոդվածի 1-ին կետի հետ, որը պարունակում է բացառությունների սպառիչ ցանկ (տե՛ս Էնգելի և այլոց գործով 1976թ. հունիսի 8-ի վճիռը, Շարքեր A, հատոր 22, էջ 24, կետ 57 և Իոլանդիան ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Շարքեր A, հատոր 25, էջ 74, կետ 194), որոնք պահանջում են նեղ մեկնաբանություն (տե՛ս՝ mutatis mutandis Կլասի և այլոց գործով 1978թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, Շարքեր A, հատոր 30, էջ 41, կետ 65): Այն չեր համապատասխանի նաև 5-րդ հոդվածի 1-ին կետի առարկային և նպատակին, այն է՝ երաշխավորել, որպեսզի ոչ ոք չզրկվի ազատությունից կամայական գործողությունների հետևանքով (տե՛ս՝ Լոովենսի

գործով 1961թ. հունիսի 1-ի վճիռը, Շարքեր A, հատոր 3, էջ 52 և Էնգելի և այլոց գործով վերոհիշյալ վճիռը, 25-րդ հոդված, կետ 58): Ավելին, այս դեպքում կանոնավի ազատության իրավունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում (տես՝ Դե Վիլդեն, Օօմսը և Վերսիան ընդդեմ Բելգիայի գործով 1971թ. հունիսի 18-ի վճիռը, Շարքեր A, հատոր 12, հոդվ. 36, կետ 656, Էնգելի և այլոց գործով վերոհիշյալ վճիռը, հոդվ. 35, կետ 82 in fine):

38. Կոնվենցիան չի տալիս «հոգեկան հիվանդ» անձանց որևէ մեկնարանություն և Նիդեռլանդների օրենսդրության մեջ չկա «հոգեկան խանգարումներով անձանց» հասկացության սահմանում։ Միևնույն ժամանակ օրենսդրությամբ ամրագրված են նման անձանց հոգեբուժարանում տեղավորելու հիմքերը։ Հոգեկան խանգարումով տառապող անձը կարող է համապատասխան դիմումի հիման վրա նախնական կարգով տեղավորվել հիվանդանոցում՝ սեփական կամ հասարակական կարգի շահերից ելնելով։ Այդ դեպքում անհրաժեշտ է բժշկական եզրակացություն առ այն, որ տվյալ անձը «գտնվում է հոգեկան խանգարման վիճակում և որ անհրաժեշտ է կամ ցանկալի բուժել նրան հոգեբուժարանում» (Օրենքի 12 և 16 բաժիններ): Եթե դատավորը հիվանդության փաստը համարում է հաստատված, ապա որոշում է կայացնում տվյալ անձին հիվանդանոցում նախնական կարգով տեղավորելու մասին (Օրենքի հոդվ. 17): Նույն կարգով համապատասխան դիմումի հիման վրա հիվանդանոցում անձի հետագա գտնվելու մասին որոշումն ընդունում է շրջանային դատարան՝ պատասխանատու բժշկի այն եզրակացության հիման վրա, որ հիվանդը հետագա բուժման կարիք ունի։ Բացի դրանից, ինչպես երևում է գործի նյութերից, նիդեռլանդյան դատարանի կողմից նման որոշումներ ընդունվում են, եթե անձը տառապում է այնպիսի կամ այն աստիճանի ծանրության հոգեկան խանգարմամբ, որը նրան խսկապես վտանգավոր է դարձնում ինչպես իր, այնպես էլ այլոց համար։ Ներկայումս Պառլամենտում քննարկման դրված օրինագծում խոսքը վերաբերում է «սեփական անձի, այլոց և սեփականության ընդհանուր անվտանգության համար սպառնալիքին»։

Եթե հաշվի առնենք այս դատական պրակտիկան, ապա գործող օրենքն ընդհանրապես անհամատեղելի չի թվում այն իմաստի հետ, որը պետք է տրվի «հոգեկան հիվանդ» բառին Կոնվենցիայի համատեքստում։ Ուստի Դատարանը գտնում է, որ անձը, որը մեկուսացման մեջ է գտնվում հոգեկան խանգարում-

Աերով տառապող անձանց մասին նիդեռլանդական օրենքին համապատասխան, ըստ էության 5-րդ հոդվածի 1-ին կետի (e) ենթակետի շրջանակում է:

39. Ուսումնասիրման ենթակա հաջորդ հարցը «օրինականության» հարցն է՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի (e) ենթակետի նպատակներին համապատասխան: Այն նախ և առաջ ենթադրում է համապատասխանություն ներպետական իրավունքին, և ինչպես հաստատվում է 18-րդ հոդվածով, համապատասխանություն սահմանափակումների նպատակին, որոնք բույլատրվում են 5-րդ հոդվածի 1-ին (e)կետով: Սակայն այն խոսում է ազատությունից զրկելու հետ կապված միջոցները ձեռնարկելու օրինականության մասին, այլ ոչ թե այն մասին, թե այդ միջոցներն ինչպիսին պետք է լինեն (տես Էնգելի և այլոց գործով վերոհիշյալ վճիռը, հոդվ. 28, կետ 68. in fine):

Ինչ վերաբերում է համապատասխանությանը ներպետական իրավունքին, Դատարանն ընդգծում է, որ «օրինական» ածականն ընդգրկում է ինչպես դատավարական, այնպես էլ նյութական նորմերը: Այն հստակորեն համրնենում է 5-րդ հոդվածի 1-ին կետի ընդհանուր պահանջի հետ, այն է՝ «օրենքով նախատեսված կարգի» պահպանումը (տես ստորև՝ կետ 5):

Իրոք, այս երկու արտահայտություններն ընդգծում են 5-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած նպատակի կարևորությունը (տես վերը՝ կետ 37): Ժողովրդավարական հասարակությունում, որին հասուկ է իրավունքի գերակայությունը (տես Գոլդերի գործով 1975թ. փետրվարի 21-ի վճիռը, մաս A, հատոր 18, հոդվ. 16-17, կետ 34, Կլասի և այլոց գործով վերոհիշյալ վճիռը, հոդվ. 25, կետ 55), ոչ մի կամայականություն երբեք չի կարող համարվել «օրինական»:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ նույնիսկ կամայականության նշան չպետք է լինի: Ըստ Հանձնաժողովի՝ ոչ ոք չի կարող զրկվել ազատությունից որպես «հոգեկան խանգարումով տառապող անձ»՝ առանց բժշկական եզրակացության, որով հավաստվում է, որ այդ անձի հոգեկան վիճակն արդարացնում է նրան հիվանդանոցում տեղավորելը: Ե'վ դիմողը, և՝ պետությունն արտահայտում են նմանատիպ կարծիք:

Դատարանը լիովին համաձայն է դատողությունների այս ընթացքին: Դատարանի կարծիքով, բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի, անձը չպետք է զրկվի ազատությունից այնքան ժամանակ, քանի դեռ համոզիչ կերպով ապա-

ցուցված չէ, որ նա իրոր հանդիսանում է «հոգեկան հիվանդ»: Այն հանգամանքը, որում պետք է համոզել իրավասու պետական մարմիններին, այն է՝ հոգեկան խանգարման առկայությունը պահանջում է օբյեկտիվ բժշկական փորձաքննություն: Այնուհետև, հոգեկան խանգարումը պետք է լինի այնպիսի բնույթի և աստիճանի, որը կարդարացնի ազատությունից երկարատև զրկելը: Ավելին, ազատությունից երկարատև զրկելը կախված է այդպիսի խախտման կայունությունից (տես՝ *mutatis mutandis* Ստորև շեղանակում գործով 1969թ. նոյեմբերի 10-ի վճիռը, մաս A, հատոր 9, էջ 43, կետ 82):

40. Դատարանի իրավասության մեջ, անկասկած, մտնում է «օրինականության» ստուգումը (տես Էնգելի և այլոց գործով Վերոհիշյալ վճիռը, էջ 29, կետ 69): Պրն Վինտերվերպը գտնում է, որ հենց անկատար ընթացակարգի պատճառով են ընդունել հիվանդանոցում հարկադիր պահելու մասին որոշումները, որոնք չեն համապատասխանում «օրինականության» պահանջներին:

Դատարանը կանդրադառնա այս պնդմանն ավելի ուշ՝ կապված դրան սերտորեն առնչվող «օրենքով նախատեսված կարգի» պահպանման հարցի հետ (տես ստորև՝ կետեր 44-50): Տվյալ համատեքստում բավարար է փաստել, որ որևէ անձի՝ որպես «հոգեկան հիվանդի», մեկուսացման մեջ պահելու հարցի լուծման ժամանակ անհրաժեշտ է, որ ճանաչվեն ներպետական մարմինների որոշակի իրավասություններ, քանի որ նախ և առաջ նրանք պետք է զնահատեն ապացույցները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Դատարանի խնդիրն է այդ մարմինների որոշումների հետազոտումը Կոնվենցիայի լույսի ներքո (տես՝ հատկապես *mutatis mutandis* Նենցիսարդի գործով 1976թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, մաս A, հոդվ. 24, էջ 22 և 23, կետեր 48, 50, Կլասի և այլոց գործով վերոհիշյալ վճիռը, էջ 23, կետ 49, «Սանդի թայմս»-ի գործով վերոհիշյալ վճիռը, էջ 36, կետ 59):

41. Ինչ վերաբերում է տվյալ գործին, ապա դատարաններում ներկայացված բժշկական եզրակացությունները մատնանշում էին դիմողի մոտ մտազարության և խելացնորության հակազդեցությունների առկայությունը: Նա չէր գիտակցում իր անորմալ վիճակը և շատ դեպքերում կատարում էր բավականին լուրջ գործողություններ՝ զնահատելով դրանց հետևանքները: Բացի դրանից, հասարակությունում նրա ինտեգրման տարրեր փորձերն ավարտվել են անհաջողությամբ:

42. Պրն Վինտերվերպը գտնում է, որ բժշկական եզրակացությունները չեն բավարարում 5-րդ հոդվածի 1-ին (e) կետի պա-

հանջները: Բացի դրանից, նա կասկածում էր, որ բուրգոմիստերի սկզբական կարգադրությունը հիմնվել է հոգերույժների եզրակացությունների վրա:

Դատարանի տեսանկյունից 1968թ. մայիսին բուրգոմիստերի կարգադրության համար հիմք հանդիսացած իրադարձություններն իրենց բնույթով լիովին արդարացնում են հիվանդանոցում «անհետաձգելի» տեղավորումը, որն այն ժամանակ նախատեսված էր օրենքի 14-րդ հոդվածով: Չնայած կասկածելի էր, որ այդ ժամկետն անհրաժեշտ էր երկարացնել մինչև 6 շաբաթ, այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածը չի հանդիսանում այնքան տևական, որպեսզի ճերքակալումն ինքնին դիտվի որպես «հակահրավական»: Չնայած դիմողի բննադատություններին՝ Դատարանը ոչ մի հիմք չունի կասկածելու բժշկական եզրակացությունների օրենկութիվությունն ու հավաստիությունը, որոնց հիման վրա նիդեռլանդյան դատարանները 1968թ. հունիսից ի վեր կարգադրել են նրա հարկադիր տեղավորումը՝ որպես հոգեկան հիվանդի: Ոչինչ չի վկայում այն մասին, որ վիճարկվող ազատությունից զրկումն իրականացվել է ոչ իրավական նպատակով:

43. Դատարանը համապատասխանաբար հետևություն է անում, որ պրո Վինտերվերպին ազատությունից զրկելը քննարկվող բոլոր ժամանակահատվածներում հանդիսացել է հոգեկան հիվանդի «օրինական ճերքակալում»՝ 5-րդ հոդվածի 1-ին (e) կետի իմաստով:

B . «Օրենքով նախատեսված կարգով»

44. Դիմողը պնդում է, որ իրեն ազատությունից զրկելը չի իրականացվել «օրենքով նախատեսված կարգով»: Դիմողի համար այդ արտահայտությունը նշանակում է դատավարության որոշակի տարրական սկզբունքների հարգում, այսինքն, ինչպիսիք են տեղեկատվություն տրամադրելը, գործին առնչվող անձին լսելը և նրան գործի քննությանը մասնակցելու և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն տրամադրելը: Նրա պնդմամբ այդ սկզբունքները նրա գործում պահպանված չեն եղել:

Կառավարությունը պատասխանում է, որ նիդեռլանդական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգը համապատասխանում է 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, քանի որ ներառում է անկախ դատավորի պարբերական հսկողություն, որը գործում է բժշկական եզրակացությունների հիման վրա:

Հանձնաժողովի կարծիքով՝ 5-րդ հոդվածի 1-ին կետը ենթադրում է լոկ բժշկական եզրակացության առկայություն: Մնացած հարցերում հոդվածը հղում է կատչքում ներպետական իրավունքին՝ չսահմանելով նվազագույն դատավարական երաշխիքներ:

45. Իր կողմից Դատարանը գտնում է, որ «օրենքով նախատեսված կարգով» ձևակերպումը, ըստ էության, հղում է ներպետական իրավունքին, խոսում է համապատասխան ընթացակարգի պահպանման անհրաժեշտության մասին՝ տվյալ օրենսդրությանը համապատասխան:

Սակայն ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանի Կոնվենցիային՝ ներառյալ ընդհանուր սկզբունքները, որոնք կամ արտահայտված են կամ ենթադրվում են դրանում:

Քննարկվող ձևակերպման հիմքում ընկած են արդարացի և պատշաճ ընթացակարգի հասկացությունները, այսինքն՝ խնդիրը նրանում է, որ ցանկացած միջոց, որը գրկում է անձին ազատությունից, պետք է բխի համապատասխան մարմնից, իրականացվի նրա կողմից և չինի կամայական: Նիդեղանդներում գործող՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքը բավարարում է այդ պայմանը:

46. Արդյոք դիմողի գործում փաստացի պահպանված են այդ օրենքով նախատեսված դատավարական նորմերը. սա հենց այն հարցն է, որը կոչված է լուծելու Դատարանը (տես, օրինակ, Դե Վիլդեն, Օօմսը և Վերսիան ընդդեմ Բելգիայի գործով վճիռը, Էջեր 38-39, կետեր 69-70, և Էնգելի և այլոց գործով Վերոհիշյալ վճիռը, Էջ 28, կետ 68 in fine): Թեև սովորաբար Դատարանը պարտավոր չէ ստուգել, թե արդյոք ներպետական մարմինների կողմից պահպանված են ներպետական իրավունքի պահանջները (տես Ռինգեյզենի գործով 1971թ. հունիսի 16-ի վճիռը, մաս A, հատոր 13, Էջ 40, կետ 97), երբ այլ է իրավիճակը, ինչպես տվյալ դեպքում, Կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում այդ օրենսդրությանը: Այդպիսի դեպքերում ներպետական օրենսդրության ոչ ճիշտ գնահատականը կարող է հանգեցնել Կոնվենցիայի խախտման:

Սակայն Կոնվենցիայով նախատեսված պաշտպանության տրամարանությունը սահմանափակում է Դատարանի հնարավորությունները: Ներպետական մարմինների՝ պվելի կոնկրետ դատարանների խնդիրն է համարվում ներպետական իրավունքի մեկնաբանումը և կիրառումը, նույնիսկ այն բնագավառներում, որտեղ Կոնվենցիան «ներառում է» այդ իրավունքի նորմերը:

Ներպետական մարմինները, ըստ էության, այս կապակցությամբ ծագող հարցերի կարգավորման գործում առավել իրավասու են:

47. Պրն Վինտերվերպը պնդում էր, որ իրեն հարկադրաբար հիվանդանոցում տեղափորելու վերաբերյալ երկու որոշումներում էլ ձևի խախտումներ են եղել:

48. Նախ, ինչպես նա է պնդում, 1968թ. դեկտեմբերի 23-ին և 1969թ. դեկտեմբերի 16-ին Շրջանային դատարանի միանձնյա դատավորի կազմով պալատի կողմից ընդունված որոշումներն «օրինական» չեն նիդեռլանդական իրավունքի տեսանկյունից: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի 22-24 հոդվածների գործողության տակ ընկնող բոլոր դեպքերը հանձնելով այդ պալատի քննարկմանը, Շրջանային դատարանի ներքին կանոնադրությունը հակասության մեջ է մտնում քաղաքացիադատավարական օրենսգրքի 258 (B) հոդվածի հետ, ըստ որի՝ գործի փոխանցումը միանձնյա դատավորի կազմով պալատ կախված է յուրաքանչյուր առանձին դեպքում ընդունվող հատուկ որոշումից, որն ընդունվում է 3-ից ոչ պակաս դատավորների կազմով պալատի կողմից:

Կառավարությունը, հիմնվելով նիդեռլանդական օրենսդրության այլ հոդվածների վրա, վիճարկում է նման մեկնարանությունը:

Հանձնաժողովն իր կողմից կարծիք է արտահայտում, որ այդ կարգի որոշումները վերաբերում են միանձնյա դատավորի իրավասությանը:

Դատարանը նշում է, որ տվյալ գործում Ուտրեխտի Շրջանային դատարանի կողմից ընդունված որոշումը համապատասխանում է նրա ներքին կանոնադրությանը, որը հաստատվել է Թագավորական դեկրետով՝ Գերագույն Դատարանի եզրակացությամբ: Տվյալ կանոնադրության՝ քաղաքացիադատավարական օրենսդրությանը համապատասխանության հարցը վիճելի հարց է, որը Գերագույն դատարանի որևէ պրակտիկայի բացակայության պայմաններում, ըստ երևույթին, բաց է մնում քննարկումների համար: Այդպիսի հանգամանքներում Դատարանը բավարար պատճառներ չունի այն հետևության համար, որ Ուտրեխտի Շրջանային դատարանը չի գործել «օլէմբով նախատեսված կարգով»:

49. Երկրորդ ձևական թերությունը, դիմողի պնդմամբ, առաջացել է այն բանի արդյունքում, որ 1969թ. դեկտեմբերի 16-ի ո-

րոշմամբ ազատությունից գրկելու ժամկետը լրացել էր ավելի շուտ, քան այն վերականգնվել է 1971թ. հունվարի 7-ին Շրջանային դատարանի կողմից:

Դրանից դիմողը երկակի հետևություն է անում. նախ՝ իրեն ազատությունից գրկելը եղել է անօրինական, քանի որ տևել է նախատեսված ժամկետից երկար: Երկրորդ՝ 1971թ. հունվարի 7-ի որոշումը, լինելով ընդունված ոչ ժամանակին, չի համապատասխանում օրենքի պահանջներին:

Կառավարությունը՝ ի պատասխան դրա բացատրում է, որ այն դեպքերում, երբ դատախազը երկարացնում է ժամկետը, նախորդ որոշումը մնում է ուժի մեջ մինչև դատարանի կողմից նոր որոշում ընդունելը: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի 24-րդ հոդվածը պահանջում է, որ բողոքը տրվի ոչ ուշ, քան նախորդ որոշման ժամկետի լրանալը, սակայն չի կոնկրետացնում, թե երբ պետք է Շրջանային դատարանն ընդունի նոր որոշում: Տվյալ կոնկրետ դեպքում դատախազը դիմել է դատարան 1970թ. դեկտեմբերի 14-ին, այսինքն՝ թույլատրելի ժամկետի սահմաններում (տես վերը՝ կետ 27):

Դատարանն ընդունում է Կառավարության կողմից ներկայացված ընդհանուր բացատրությունը: Գործի հանգամանքներից չի երևում, որ ձգձգումը հանգեցրել է ազատությունից կամայական զրկման. նախորդ որոշման ժամկետի ավարտի և հաջորդ որոշման ընդունման միջև եղած երկշարարյա ընդմիջումը ոչ մի դեպքում չի կարող դիտարկվել որպես չարդարացված կամ չափազանց:

50. Հետևաբար, դիմողը հարկադրաբար պահվել է հիվանդանոցում «օրենքով նախատեսված կարգով»:

C. Բուժման իրավունքի մասին հավաստում

51. Պրմ Վիճուերվերպը պնդում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը (e) ենթադրում է, որ իբրև «հոգեկան հիվանդ» ազատությունից գրկված յուրաքանչյուր որ անհրաժեշտ բուժման իրավունք ունի՝ որպես երաշխիք, որ չի պահվի առավել երկար, քան դա լիովին անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է ինքնին իր վիճակին, ապա դիմողը դժգոհություն է հայտնում, որ հոգեբույժի հետ իր հանդիպումները եղել են չափազանց կարծ և հազվադեպ, և որ իրեն տրվող դեղամիջոցներում պարունակվել են չափից ավելի շատ տրակվիլիզատորներ:

Կառավարությունը կտրականապես հերքում է այս մեղադրանքը:

Դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ հոգեկան իիվանդ անձի բուժվելու իրավունքը, որը համապատասխանում է նրա վիճակին, ինքնին չի բխում 5-րդ հոդվածի 1-ին (ե) կետի պահանջմանը: Դեռ ավելին, գործի նյութերում չկա բուժմանը վերաբերող որևէ բան, որը կխախտեր Կոնվենցիայի որևէ այլ դրույթ:

D. Եզրակացություն

52. Դատարանն այդպիսով եզրակացնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

2. 5-րդ հոդվածի 4-րդ կետի վիճարկվող խախտում

53. Դիմողը հիմնվում է նաև 5-րդ հոդվածի 4-րդ կետի վրա, որն ասում է.

«Յուրաքանչյուր ոք, ով զրկվել է ազատությունից ձերքակալման կամ կալանավորման ճանապարհով, ունի դատական քննության իրավունք, որի ընթացքում դատարանն անհետաձգելիորեն լուծում է նրա կալանավորման օրինականության հարցը և ընդունում է որոշում նրա ազատման մասին, եթե կալանավորումն անօրինական է»:

Դատարանը պարտավոր է քննարկել այդ գանգատը, շնայած նրան, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի հայտնաբերվել (տե՛ս Դե Վիլդը, Օօմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի գործով վերոհիշյալ վճռող, էջ 39-40, կետ 73):

Ա Բուրգոմիստերի կողմից ընդունված նախնական որոշման և հաշտարար ու շրջանային դատարանների կողմից ընդունված հետազա որոշումների վերաբերյալ

54. Առաջին անգամ պքն Վինտերվերպը հարկադիր պահվել է իիվանդանոցում 1968թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 24-ը՝ Ամերսֆորտի բուրգոմիստերի կարգադրությամբ: Այդ կարգադրությունը, արտակարգ ընթացակարգի շրջանակում, որու այն ժամանակ նախատեսված էր Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի 14-րդ հոդվածով, ուժի մեջ էր 3 շաբաթ, սակայն ժամկետը երկարացվել էր դատախազի կողմից:

Դիմողին հետազա ազատությունից զրկումը վարչական գործողության արդյունք չի հանդիսացել: Համաձայն օրենքի 17, 23 և 24 հոդվածների՝ ժամանակավոր տեղավորման մասին 1968թ. հունվարի 24-ի որոշումն ընդունվել է Ամերսֆորտի հաշտարար դատավորի կողմից, 1968թ. դեկտեմբերի 23-ի որոշումը՝

Ուտրեխտի Շրջանային դատարանի կողմից, իսկ հետագա նորոգված որոշումները՝ Ուտրեխտի և Խերտոգենբուի շրջանային դատարանների կողմից (տես վերք՝ կետ 24-28):

55. Դե Վիլդեն, Օօմար և Վերավիազ ընդդեմ Բելգիայի գործով 1971թ. հունիսի 18-ի (էջ 40, կետ 76) վերոհիշյալ վճռում Դատարանը նշել է.

«Այն դեպքերում, երբ որևէ անձի ազատությունից զրկելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից, 5-րդ հոդվածի 4-րդ կետը Պայմանավորվող կողմերին պարտավորեցում է անձին տրամադրել դատարան դիմելու իրավունք:

Սակայն դա չի նշանակում, որ միևնույն սկզբունքը գործում է, երբ գործն արդեն իսկ լուծված է դատարանի կողմից: Վերջին դեպքում 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հսկողությունը ներառված է այդ որոշման մեջ»:

Հիմնվելով իր իսկ պրակտիկայի վրա՝ Հանձնաժողովն այն կարծիքն է հայտնում, որ նման տեսքով Դատարանի այդ հետևողաբար չի կարող գործել «հոգեկան խանգարումների» հետ կապված անձանց ազատությունից զրկելու մասին գործերում, համենայն դեպքում, եթե դա իրականացվում է անորոշ ժամկետով:

Պատճառները, որոնք սկզբում արդարացնում էին հարկադրաբար պահելը, կարող են վերանալ (տես վերք՝ կետ 38 in fine): Հետևաբար, 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունն այնպես, ըստ որի՝ այդ դրույթը բացառում է այդպիսի պահման օրինականությունն ստուգելու հնարավորությունը միայն այն հիմքով, որ սկզբնական որոշմամբ ընդունվել է դատարանի կողմից, կհակասեր 5-րդ հոդվածի նպատակներին: Ազատությունից զրկելու տեսակի բնույթը պահանջում է վերահսկողություն խելամիտ պարբերականությամբ: Սակայն, ինչպես նշում է Հանձնաժողովն իր գեկույցի կետ 15-ում, այդ հարցի հետագա ուսումնասիրությունը կլինի մակերեսային, առանց այն հարցի նախնական լուծման, թե իրո՞ք պրո Վինտերվերպին վերաբերող համապատասխան որոշումներն ընդունվել են «դատարան դիմելուց» հետո, ինչպես որ նախատեսվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետում:

56. Ո՞չ բուրգոմիստերը, որն արել է սկզբնական կարգադրությունը, ո՞չ դատախազը, որը երկարացրել է դրա գործողության ժամկետը, չունեն «դատարանի» հաւաքանիշներ: Ի տարբերություն նրանց, և հաշտարար դատարանը, և շրջանային դատարանները, որոնք ընդունել են համապատասխան որոշումները, անկասկած, կազմակերպահրավական տեսանկյունից հան-

դիսանում են «դատարաններ». նրանք «անկախ են ինչպես գործադիր իշխանությունից, այնպես էլ կողմերից» (տես Դե Վիլեն, Օօմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի գործով վերոհիշյալ վճիռը, էջ 41, կետ 77):

57. Այնուամենայնիվ, այդպիսի մարմնի միջամտությունը կհամապատասխանի 5-րդ հոդվածի 4-րդ կետին՝ պայմանով, որ կիրառվող ընթացակարգը կրում է դատական բնույթ և շահագրգիռ անձին տալիս է այնպիսի երաշխիքներ, որոնք համապատասխանում են «ազատությունից զրկելու խնդրո առարկա տեսակին»: «Որպեսզի պարզվի, թե արդյոք դատական քննությունն ապահովում է անիրաժեշտ երաշխիքներ, անիրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքների կոնկրետ բնույթին, որոնցում իրականացվում է տվյալ դատական քննությունը» (նույն հիշյալ վճռում, էջեր 41 և 42, կետ 76 in fine և կետ 78):

Ինչպես իրավացիորեն ընդգծում է Կառավարությունը, «...հոգեկան հիվանդների հարկադիր պահումը» (հոդվ. 5, կետ 1 (e)) իրենից ներկայացնում է հասուն կատեգորիա:

58. Հանձնաժողովի կարծիքով՝ այս կատեգորիայի գործերի դատական քննության համար լիովին անիրաժեշտ է համարվում ապահովել շահագրգիռ անձի իրավունքը՝ շարադրելու իր դիրքորոշումը և փաստարկները, վիճարկելու բժշկական և սոցիալական եզրակացությունները (տես զեկույցի կետ 102): Հանձնաժողովի պատվիրակների կարծիքով՝ նիդեռլանդական իրավունքը հակասում է 5-րդ հոդվածի 4-րդ կետին՝ դատավորին տրամադրելով հայեցողական իշխանություն:

Դիմողը, ըստ էության, կողմ է Հանձնաժողովի փաստարկմանը: Նա պնդում է, որ հաշվի առնելով հոգեկան խանգարումներով տառապող անձանց հասուն դրությունը, 5-րդ հոդվածի 4-րդ կետից բխում է իրավաբանական օգնություն ստանալու նրանց իրավունքը:

59. Կառավարության կարծիքով՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետը դատարանին չի պարտավորեցնում անմիջականորեն լսել անձին, որի՝ օբյեկտիվ բժշկական հետազոտությունների հիման վրա պարզված հոգեկան վիճակը նրան հնարավորություն չի տալիս որևէ իրավաբանական նշանակություն ունեցող ցուցմունք տալու: Մի քանի տարվա ընթացքում նիդեռլանդյան դատարանները փոխանցված օբյեկտիվ բժշկական եզրակացությունները ցույց են տալիս, ինչպես պնդում է Կառավարությունը, որ պրո Վինտերվերպին վերաբերող դեպքը հենց այդպիսին է:

Կառավարության պնդմամբ՝ Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքը պարունակում է բավարար երաշխիքներ: Վերահսկողությունն իրականացվում է անկախ դատարանի կողմից, որն ունի յուրաքանչյուր առանձին գործը հետազոտելու լիարժեք հնարավորություն: Դեռ ավելին, վերահսկողության ընթացքն անընդմեջ է. առնվազն տարեկան մեկ անգամ դատարանը որոշում է ընդունում հարկադիր պահման մասին որոշումն ուժի մեջ պահելու անհրաժեշտության վերաբերյալ: Օրենքը միաժամանակ դատախազին պարտավորեցնում է երաշխավորել, որ ոչ ոք ապօրինի չտեղափորվի հոգեքուժարանում: Վերջապես, թժկական եզրակացությունները և հաշվետվությունները, որոնք պահանջվում են տարբեր փուլերում, կազմվում են հատուկ կանոններին համապատասխան, որոնք կոչված են ապահովելու հիվանդի պաշտպանության երաշխիքը:

60. Դատարանը համաձայն չէ Կառավարության տեսակետին:

Այսու է, որ դատական քննությունները, որոնց մասին խոսվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետում, անպայման չէ, որ ուղեկցվեն այն նույն երաշխիքներով, որոնք նախատեսված են 6-րդ հոդվածի 1-ին կետով՝ քաղաքացիական և քրեական գործերի դատավարության համար (տե՛ս Դե Վիլդեն, Օօսմը և Վերսիան ընդդեմ Բելգիայի գործով վերոհիշյալ վճիռը, էջ 42, կետ 78, *in fine*): Այնուամենայնիվ, կարևոր է, որպեսզի շահագրգիռ անձն ունենա դատարանի մատչելիության իրավունքը և անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում ներկայացնելու առանց որի նա զրկված չլինի «հիմնական դատավարական երաշխիքներից, որոնք գործում են ազատությունից զրկելու հետ կապված գործերում» (տե՛ս վերոհիշյալ վճիռը, էջ 41, կետ 76): Հոգեկան հիվանդությունը կարող է լինել այդպիսի իրավունքի սահմանափակման կամ դրա իրականացման միջոցի փոփոխման պատճառ, բայց այն չի կարող ծառայել որպես այդ իրավունքի եռության խախտման արդարացում: Իրոք, կարող է առաջանալ հատուկ դատավարական երաշխիքների կիրառման անհրաժեշտություն այնպիսի անձանց շահերի պաշտպանության համար, որոնք իրենց հոգեկան ոչ լիարժեքության ուժով ընդունակ չեն անձամբ իրականացնելու դա:

61. Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի 17, 23 և 24-րդ հոդվածներին համապատասխան՝ տվյալ ժամանակահատվածներում գործող խմբագրությամբ, ոչ հաշ-

տարար դատարանը, ո՞չ էլ շրջանային դատարանը պարտավոր չեն եղել լսել այն անձին, որի հարկադիր պահման մասին խոսք էր գնում (տե՛ս վերը՝ կետեր 14, 17 և 18):

Ինչ վերաբերում է կոնկրետ փաստերին, ապա դատական քննությունների ժամանակ հաղորդակցություն չի եղել ո՞չ անձամբ դիմողի հետ, ո՞չ նրա ներկայացուցչի միջոցով նրան ոչ մի անգամ չեն հայտնել ոչ դատական միատերի մասին և հճարավորություն չի ընձեռվել մասնակցելու դատական վիճարանություններին:

Այդ հիմնական հարցի կապակցությամբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված երաշխիքները բացակայել են ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ պրակտիկայում: Չնայած որոշակի դատական հատկանիշների առկայությանը՝ ընթացակարգը, որին հետևել են և հաշտարար, և շրջանային դատարանները պրո Վինտերվերպին ազատազրկելու մասին միջնորդություններով որոշումներ ընդունելու ընթացքում, նրան չի ապահովել «դատարան դիմելու իրավունքով»՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով (տե՛ս վերը՝ կետ 57): Ոչ մի դեպքում չնվազեցնելով հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքով տրամադրվող բազում երաշխիքների նշանակությունը՝ Դատարանը գտնում է, որ հիշյալ ընթացակարգը չի համապատասխանում 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին:

В. Ազատ արձակելու մասին դիմողի միջնորդությունների վերաբերյալ

62. Կառավարությունն արդարացիորեն պնդել է Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքին համապատասխան ստեղծված ողջ համակարգի մանրամասն ուսումնափրման անհրաժեշտության մասին: Այդ պաճառով էլ, մնում է պարզել, արդյոք Դատարանի կողմից հայտնաբերված բացքումները լրացվում են ազատ արձակելու մասին միջնորդությունների լուծումը կարգավորող ընթացակարգերով (օրենքի հոդվ. 29):

63. Չնայած, որ օրենքի 29-րդ հոդվածը թույլ է տալիս շահագողին անձին հասել իր դրության վերանայմանը, իր միջնորդությամբ՝ ազատ արձակելու մասին որոշումը անպայմանորեն չի ընդունվում դատարանի կողմից: Միջնորդությունն ուղարկվում է հիվանդանոցի ղեկավարության, ապա բացասական բժշկական եզրակացության դեպքում փոխանցվում է դատախազին: Վերջինս, ըստ էության, պետք է այն փոխանցի շրջանային դա-

տարան, սակայն որոշ դեպքերում ևս պարտավոր չէ դա անել, հատկապես, եթե լիովին ակնհայտ է, որ այդ միջնորդության բավարարումն անհնարին է: Դատախազի որոշումը՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով, ոչ մի կերպ չի կարող դիտարկվել որպես դատարանի կողմից ընդունված: Իհարկե, ազատ արձակելու մասին միջնորդություններ ներկայացնելու օրենքով նախատեսված հանգամանքներից կախված, կարող է սահմանափակվել հոգեկան հիվանդների՝ դատարան դիմելու հնարավորությունը (տես վերը՝ կետ 60): Իսկ եթե դատախազը հրաժարվում է փոխանցել միջնորդությունը շրջանային դատարան՝ պատճառաբանելով, որ այն ակնհայտորեն հիմնավորված չէ, նա ոչ միայն սահմանափակում է, այլ փաստորեն բացառում է դատարան դիմելու իրավունքն այնպես, ինչպես դա ներկայացված է 5-րդ հոդվածի 4-րդ կետում:

Եթե այդպիսի միջնորդությունը ներկայացվում է շրջանային դատարան, նա դիմողի մասնակցության մասին հարցում լիովին ազատ է: Այդ կարգի լիազորությունը չի ապահովում ազատությունից զրկելու վերաբերյալ գործերով կիրառվող ընթացակարգի հիմնական երաշխիքների իրականացումը (տես վերը՝ կետեր 60-61):

64. Շրջանային դատարանը լսել է պրո Վինտերվերպին 1969թ. փետրվարին, եթե դատարանը լուծում էր ազատ արձակելու մասին նրա առաջին միջնորդությունը: Նրան հաջողվել է այդ փուլում իրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը:

Ի տարբերություն առաջինի, նրա հետագա միջնորդությունները 1971թ. ապրիլին, 1972թ. հուլիսին և 1973թ. փետրվարին, դատախազի կողմից չեն ուղարկվել շրջանային դատարան՝ պատճառաբանելով, որ դրանք գուրկ են հաջողության որևէ հեռանկարից (տես վերը՝ կետ 30): Նա ամեն անգամ լսել է պրո Վինտերվերպին, և նրա որոշումները հնարավոր են, որ արդարացված էին՝ հաշվի առնելով նրա տրամադրության տակ եղած տեղեկությունը, սակայն դրանք չեն կարող համարվել որպես «դատարանի» կողմից ընդունված որոշումներ՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

C. Դիմողի՝ իրավաբանական ներկայացուցիչ ունենալու ցանկության բացակայության վերաբերյալ

65. Կառավարությունն իր հուշագրի կետ 11(b)-ում հայտարարում է, որ անձը, ով ունի «իրեն հարկադրաբար պահելու օրինականությունը հերքող բավարար և հիմնավոր պատճառներ»,

Աիդեոլանդական օրենսդրությամբ այդ մասին կարող է տեղեկացնել դատարանին պաշտպանի միջոցով: Պրո Վինտերվերպն ուներ քավարար հնարավորություններ այդ և պաշտպանի հետ այլ խորհրդակցությունների համար, հատկապես այն ժամանակահատվածներում, երբ նա հեռացել է հիվանդանոցից: Քանի որ նա ոչ մի անգամ չի փորձել դիմել դատարան պաշտպանի միջոցով ոչ իր գործի հերթական վերանայումների ժամանակ, ոչ էլ ազատ արձակելու մասին միջնորդությունների հետ կապված, ապա չի կարելի ասել, որ նրան զրկել են «դատարան դիմելու» իրավունքից այնպես, ինչպես երաշխավորում է 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

66. Դատարանը համաձայն չէ այդպիսի փաստարկմանը. «քավարար և հիմնավոր պատճառների» առկայությունը չի կարող որպես նախնական պայման ծառայել 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ընթացակարգի կիրառման համար, քանի որ դա հենց այն հարցն է, որը պետք է լուծի ազգային դատարանը: Բացի դրանից, 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի պահանջում, որպեսզի «հոգեկան հիվանդ» և բժիշկների հսկողության տակ գտնվող անձինք անձամբ փորձեն իրենց համար իրավաբանական ներկայացուցիչ գտնել նախքան դատարան դիմելը:

Չի կարելի պնդել, որ քանի որ դիմողը ոչ մի անգամ չի ներկայացվել պաշտպանի միջոցով, ապա նա անտեսել է 5-րդ հոդվածի 4-րդ կետով երաշխավորված իր իրավունքի իրացումը. նա փորձել է դա անել չորս անգամ՝ ձգտելով հասնել հարկադիր պահման մասին որոշման վերանայմանը (տես վերը՝ կետ 64):

D. Եզրակացություն

67. Այսպիսով, պրո Վինտերվերպին հիվանդանոցում հարկադիր պահելը կարգադրող կամ քույլատրող որոշումներն ընդունվել են այն մարմինների կողմից, որոնք կամ չեն ունեցել «դատարանի» հատկանիշներ, կամ չեն կարողացել տրամադրել 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող դատական երաշխիքներ: Դիմողը նաև չի ունեցել դատարան դիմելու հնարավորություն, երբ լուծվել է նրան ազատ արձակելու միջնորդությունների հարցը, բացառությամբ առաջին միջնորդության, որը դատարանի կողմից մերժվել է 1969թ. փետրվարին: Հետևաբար, պրո Վինտերվերպի նկատամբ խախտվել է 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

68. Այս հետևության լույսի ներք Դատարանն անհրաժեշտ չի համարում լուծել այն հարցը, թե արդյոք 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված «օրինականության» նկատմամբ վերա-

հսկողությունը տարածվում է միայն կիրառված ընթացակարգի ձևական առումով ճշտության վրա, թե նաև այնպիսի միջոցի կիրառման ճշտության վրա, ինչպիսին ազատությունից զրկելն է: Հանձնաժողովը, Նիդեռլանդների կառավարությունը և դիմողը նախընտրել են երկրորդ մեկնարանությունը: Սակայն դա վիճարկվել է Միացյալ Թագավորության կողմից այլ գործով 1979թ. հունվարի 9-ի իր հուշագրում (տես վերք՝ կետ 7): Համեմայն դեպս, Նիդեռլանդների օրենսդրությունը չի սահմանափակում այդպիսի վերահսկողության սահմանները:

6-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտում

69. Դիմողը ներկայացրել է նաև երրորդ գանգատը՝ «լրացնիչ, սակայն կապված մյուսների հետ»: Քանի որ հարկադիր պահելն ինքնարերաբար նրան զրկել էր իր սեփականությունը կառավարելու հնարավորությունից, տեղի է ունեցել «նրա քաղաքացիական իրավունքների և պարտականությունների դադարում», ընդ որում, առանց դատական երաշխիքների, որոնք նախատեսված են 6-րդ հոդվածի 1-ին կետում, որում աված է.

«Յուրաքանչյուր ոք իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների որոշման կամ իրեն առաջադրվող ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման ժամանակ ունի արդարացի և հրապարակային դատավարության իրավունք ողջամիտ ժամկետում օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից: Դատական որոշումը հայտարարվում է հրապարակայնորեն, սակայն լրատվության միջոցների և հասարակության մասնակցությունը դատական քննությանը կարող է արգելվել ամբողջ դատավարության կամ դրա մի մասի ընթացքում՝ քարոյականության, հասարակական կարգի կամ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության նկատառումներով, ինչպես նաև, եթե դա պահանջում են անշափահասների շահերը կամ կողմերի անձնական կյանքի պաշտպանության համար, կամ այն չափով, որքանով դատարանի կարծիքով դա անհրաժեշտ է հատուկ հանգամանքներում, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

70. Հանձնաժողովն իրեն պարտավորված չի համարել որևէ կարծիք հայտնելու, քանի որ տվյալ հարցը վերաբերում է «այլ փաստեր»-ին, որոնք տարբերվել են այն փաստերից, որոնք ի սկզբանե փոխանցվել էին իր քննարկմանը և համապատասխանաբար չեն քննարկվել:

71. Իոլանդիան ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով 1978թ. հունվարի 18-ի վճռում (մաս A, հատոր 25, էջ 63, կետ 157) Դատարանը վիճելի դեպքերում իր իրավասությունների շրջանակը բացատրել է հետևյալ կերպ.

«Ընդունելիության մասին Հանձնանաժողովի որոշմամբ որոշվում է Դատարանում գործի քննարկման առարկան: Սիայն այդ սահմաններում Դատարանը կարող է քննել փաստի կամ իրավունքի վերաբերյալ առաջացող բոլոր հարցերը»:

Ընդունելով այն Վիճուերվերայի 1975թ. դեկտեմբերի 30-ի գանգատը՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ այն ուսումնասիրվել է՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածը (տես վերը՝ կետ 33): Բացատրելով, թե ինչո՞ւ Հանձնաժողովը «անհաժեշտ կամ ցանկալի» չի համարել գանգատի ըստ էության քննարկումը 6-րդ հոդվածի հիման վրա՝ Հանձնաժողովի ներկայացուցիչները ճշտել են, որ այստեղ կա քննարկման ենթակա խնդիր:

72. Ամենից առաջ Դատարանը նշում է այն փաստը, որ Կառավարությունը ո՞չ Հանձնաժողովում, ո՞չ հենց Դատարանում առաջ չի քաշել այս կետով ոչ մի նախնական առաջարկություն:

Դեռ ավելին, չնայած որ քննարկող գանգատը կոնկրետ չի հիշատակվել այն Վիճուերվերայի կողմից Հանձնաժողով ներկայացված նախնական գանգատներում, այն բացահայտորեն կապված է դրանց հետ: Նրա դժգոհությունը, ինչպես հայտարարվել է ընդունելիության մասին հարցի քննարկման ժամանակ նրան ներկայացնող փաստաբանի կողմից, անմիջականորեն ուղղված է եղել ազատությունից զրկելու դեմ: Նա գտնում էր, որ իրեն մեկուսացման մեջ են պահել կամայականորեն և առարկում էր այն բանի դեմ, որ մերժել են ինչպես դատարանում լսվելու հնարավորության հարցում, այնպես էլ որոշումների մասին տեղեկություն տալու հարցում, որոնց հետևանքով նրան հարկադիր պահելը երակարացվել է մի քանի անգամ (տես վերը՝ կետ 33): 6-րդ հոդվածին վերաբերող նոր խնդիրը, որը բարձրացրել է այն Վան Լունին Հանձնաժողովի կողմից գործի հանգամանքների քննարկման փուլում, վերաբերում էր իրավական հետևանքներին, որոնք ինքնարերարար բխում են հարկադրաբար հոգեբուժարանում տեղափորելու փաստից (տես Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օրենքի բաժին 32, իսկական վճոի կետ 21): Այդպիսով, այդ խնդիրը սերտորեն կապված է այն հարցի հետ, որոնք ձևավորում են այն Վիճուերվերայի նախնական գանգատների առարկան, որոնք Հանձնաժողովի

կողմից ճանաչվել էին ընդունելի (տես mutatis mutandis Դելկուր-տի գործով 1970թ. հունվարի 17-ի վճիռը, մաս A, հատոր 11, էջ 20, կետ 40):

Այդպիսով, Դատարանն իրավասու է ընդունել որոշումներ այս հարցով:

73. Կառավարությունը կասկածում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է այս գործի հանգամանքների նկատմամբ: Նա այն կարծիքին էր, որ վեճի առարկան ավելի շատ հանդիսանում է կարգավիճակի, այլ ոչ թե քաղաքացիական իրավունքների և պարտականությունների մասին հարց՝ որպես այդպիսին:

Դատարանը համամիտ չէ այդ կարծիքին: Իր ուսուցվածքն անձամբ կառավարելու ուսակությունը ենթադրում է քաղաքացիական իրավունքների իրականացում և, հետևաբար, ազդում է «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» վրա՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում (տես Կյոնիգի գործով 1978թ. հունիսի 28-ի վճիռը, մաս A, հատոր 27, էջ 32, կետ 95): Այդ ուսակությունից պրո Վինտերվերպին զրկելը հավասարազոր էր այդպիսի իրավունքների և պարտականությունների «դադարեցման»:

74. Դիմողը զրկվել էր այդ ուսակությունից հոգեբուժարանում տեղափորումից հետո (տես վերը՝ կետ 32): Միանգամայն պարզ է, որ բուրգոմիստերի կարգադրությամբ նրան անհապաղ հիվանդանոցում տեղափորելու պայմաններում որևէ դատական քննություն չի իրականացվել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Ազատությունից զրկելու հետագա ժամկետները կարգադրվել էին Ամերսֆուրտի հաշտարար դատարանի ու Խերտոգենուրուի շրջանային դատարանների կողմից՝ համապատասխան ժամկետներն անցնելուց հետո: Սակայն ինչպես արդեն նշվել է տվյալ դատական վճռում, ոչ օրենքը, ոչ էլ պրակտիկան պրո Վինտերվերպին հնարավորություն չի տվել ներկայանալու ոչ անձամբ, ոչ էլ ներկայացուցիչ միջոցով (տես վերը՝ կետ 31): Դեռ ավելին, դատական ընթացակարգը վերաբերում էր քացառապես նրան ազատությունից զրկելուն: Հետևաբար, չի կարելի համարել, որ այն ներառել է նրա քաղաքացիական գործունակության մասին հարցի «արդարացի քննություն»՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

75. Որպես ընդիանուր փաստարկ՝ Կառավարությունը պնդում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը խախտված չի եղել, քանի որ Հոգեկան խանգարումներով տառապող անձանց մասին օ-

րենքը պաշտպանում է հոգեկան հիվանդի քաղաքացիական իրավունքները, որը հոգեկան վիճակի պատճառով իր գործերը կառավարելու սեփական անկարողությունից պաշտպանվելու կարիք է զուտ:

Դատարանը համաձայն չէ նման մոտեցմանը: Ինչպիսին էլ որ լինի հոգեկան խանգարումներով տառապող անձին իր ունեցվածքը կառավարելու ունակությունից զրկելու հիմնավորումը, եթղ հոդվածի 1-ին կետի երաշխիքները պետք է հարգել: Չնայած, ինչպես նշվել է վերը՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետի հետ կապված (տես կետեր 60,63), հոգեկան հիվանդությունը կարող է օրինական դարձնել «դատարան դիմելու իրավունքի» իրականացման որոշ սահմանափակումներ՝ այն չի կարող արդարացնել այդ իրավունքի լրիվ բացառումը, ինչպես որ այն նախատեսված է 6-րդ հոդվածի 1-ին կետով (տես Գոլդերի գործով վերոհիշյալ վճռը, էջեր 18-19, կետեր 36, 38, 39):

76. Համապատասխանաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

IV. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառման մասին

77. Գործի քննության ժամանակ դիմողի փաստաբանը, որպես արդարացի հատուցում, առաջարկել է հինգ կետից բաղկացած սխեմա, որը հիմնականում կապահովեր իր պաշտպանյալի նկատմամբ իրականացված սոցիալ-հոգեբուժական ծառայության կապակցությամբ կատարված ծախսերը, ինչպես նաև կհավաստվեր, որ լիարժեք դատավարական երաշխիքներ կտրամադրվեն՝ հարկադիր տեղավորման վերականգնման մասին ամենամյա որոշումների և ազատման մասին միջնորդությունների կապակցությամբ: Նյութական վճարի հատուցման և բարոյական վճարի համար դրամական փոխհատուցման ոչ մի պահանջ չի ներկայացվել:

Հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ չկոնկրետացնելով այս հարցը, հայտարարել են, որ սա փոխհատուցման մասին պայմանավորվածության արդարացի սխեմա է, որը համապատասխանում է 50-րդ հոդվածին:

Կառավարությունը, իր հերթին, պահպանել է իր դիրքորոշումը:

Այսպիսով, չնայած Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառման մասին հարցը բարձրացված էր Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնին համապատասխան, Դատարանը պատրաստ չէ որոշում ընդունել: Այդ պատճառով Դատարանն ստիպված է հետաձգել այս հարցի քննումը և որոշել հետագա ընթացակարգը՝ անհրաժեշտաբար հաշվի առնելով պատասխանող պետութ-

յան և դիմողի միջև համաձայնության հնարավորությունը (Դատարանի կանոնակարգի 50-րդ կանոն, կետեր 3, 6, 5):

ԱՅՍ ՀԻՄՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել,
2. Վճռում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:
3. Վճռում է, որ Դատարանն իրավասու է ընդունելու որոշումներ 6-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ գանգատի կապակցությամբ,
4. Վճռում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
5. Վճռում է, որ 50-րդ հոդվածի կիրառման մասին հարցը պատրաստ չէ որոշում ընդունելու համար և համապատասխանորեն
 - (a) այդ հարցի լուծումն ամբողջությամբ հետաձգում է,
 - (b) Հանձնաժողովին առաջարկում է այս վճոի հայտարարման օրվանից երկու ամսվա ընթացքում Դատարանին ներկայացնել իր դատողությունները վերոհիշյալ հարցի կապակցությամբ, տեղյակ պահել Դատարանին ցանկացած կարգավորման մասին, որին կհանգեն Կառավարությունը և դիմողը,
 - (c) իր հետազա լուծմանը թողեց հետազա ընթացակարգը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, ի դեպ անգլերեն տեքստը վավերական է և հրապարակվել է Ստրասբուրգում, Մարտու իրավունքների պալատում 1979թ. հոկտեմբերի 24-ին:

Մարկ-Անդրե Էյսեն
Քարտուղար

Հելգա Դեղերսեն
Նախագահ